ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ 2

Հրապարակային մրցույթի հայտերում ներառվելիք նվազագույն փաստաթղթերի ցանկը և տեղեկատվությունը

Հրապարակային մրցույթի հայտերը առնվազն պետք է ներառեն՝

1. Անկախ գնահատող կազմակերպության միջնորդագիրը և Բանկի հետ հնարավոր համագործակցության շրջանակները,
2. Անկախ գնահատող կազմակերպության կանոնադրության պատճենը,
3. Անկախ գնահատող կազմակերպության կողմից Երևան քաղաքում և ՀՀ մարզերում ներկայացվածության և ներկայացուցիչ ունենալու վերաբերյալ տեղեկանք (մանրամասն՝ ըստ մարզերի):
4. Տեղեկանք՝ Անկախ գնահատող կազմակերպության հիմնական և համատեղության կարգով աշխատող որակավորված անձանց վերաբերյալ (կցել նշված անձանց աշխատանքի ընդունման հիմքերի պատճենները),
5. Որակավորված աշխատակիցների որակավորման վկայականների պատճենները և աշխատանքի բնութագրերը,
6. Անկախ գնահատող կազմակերպության կողմից առաջարկվող ծառայությունների ցանկը, «ԱյԴի Բանկ» ՓԲԸ հաճախորդներին առաջարկվող սակագները և նախնական ու վերջնական գնահատման ակտերի տրամադրման ժամկետները (սակագներն ու ժամկետները պետք է նշված լինեն հստակ՝ յուրաքանչյուր տեսակի ծառայության համար առանձին, իսկ մարզերում տարբեր լինելու պարագայում՝ ըստ մարզերի ներառյալ ճանապարհածախսը),
7. Անկախ գնահատող կազմակերպության «Գնահատման ամբողջական հաշվետվություն» 2 մտացածին օրինակների համար, որոնցից մեկը՝ բնակարան, մյուսը՝ արտադրական սարքավորումներ,
8. Գնահատողների ապահովագրության պայմանագրերի պատճենները
9. Մրցույթի անցկացման հայտարարությանը կից ներկայացված, պատշաճ կերպով լրացված Ենթահավելված 3-ը: